

աստիկ զգացուած քահանային ծռելով կ'ուզէր յայտնել թէ ինքն ալ նոյն կարծիքն ունի: Իսկ երկու իշխանք քահանային իրաւունք տալէն ետքը մէջերնին խօսք բացին վարուցանի, կ'թոյց և օրագրաց լրերուն վրայօք: Նոյն ատենը քահանայն գնաց ջերմանոցին բոյսերը զննելու. յետոյ մօտեցաւ տղոց քով և անոնց զուարճալի խաղերուն ականատես ըլլալէն ետքը իրեն կանչելով զանոնք հարցուց.

— Տղայքս, դուք որ այսպիսի գեղեցիկ և ծառազարդ դաշտի մը մէջ կը խաղաք, արդեօք յանուանէ կը ճանչնաք այս ծառերը՝ որ մուշկ վկաներու պէս ձեր վրայ կը նային:

Իսկ անոնք մէկզմէկ յաղթել ջանալով մի առ մի ծառոց անունները կուտային, և երբ կը սխալէին՝ քահանայն կ'ուզէր.

— Գու ըսէ, Հենրիկոս, որն է տերև չունեցող ու ձմեռը կանանչ մնացող ծառը, հարցուց քահանայն բարեկամ իշխանին մեծ որդւոյն:

— Նոճին, պատասխանեց տղայն:

— Երբ նոճի մը տեսնաս՝ ինչ կը մտածես անոր վրայ:

Տղայն երկայն ատեն պատասխան մը չկարենալով գտնալ, վերջապէս նոճւոյ վրայ նայելով ըսաւ.

— Գեղեցիկ է նոճին, անուշ ու զօրացուցիչ հոտով, մէկ արմատէ և մէկ գազաթէ կը ձևանայ:

— Ո՞ր կողմանէ օգտակար է:

— Վառելու փայտ տալով:

— Այդ բաւական չէ, տղայս, դեռ շատ բան կայ գիտնալիք նոճւոյն վրայ: Տես, նոճիէն հիւթ մը կը կաթի՝ որուն խէժ կ'ըսենք, որ աղէկ գործածողին վերաց առողջարար սպեղանի կ'ըլլայ. անով կ'օժեն տակառներ ու նաւեր ջրէն անփնաս պահելու համար. հիւսը անոր փայտէն կը շինէ որորոց, մահիճ ու դագաղ. այն մոծիւրն ալ որ նոճւոյ փայտ վառելու անոն միսանցքին մէջ կը նստի՝ թանաք շինելու կը ծառայէ, որով ձեր կարդացած գիրքերը տպած են. ասկից զատ իրեն միշտ դալարութեանը և ուղ-


ղութեանը պատճառաւ՝ յուսոյ ալ օրինակ է, նման առ Աստուած ուղղեալ սրտի մը:

Կը շարունակուի:

ՔԱՌԻՖՄԱՆԻ ԹՌՉՈՂ ՄԵՔԵՆԱՅՆ

Յետին ճարտարութեանց Հանդիսին՝ Լոնտոնայի Բիւրեղեան պալատին մէջ մէկ քանի մեքենաներ տեսնուեցան, որոնք օդային նաւարկութեան յառաջադիմութեան հաւաստիք մը կ'ընծայեն: Անտարակոյս է որ բուն օդային նաւարկութեան մը գործադրութիւնը դեռ ևս անկարելի է, վասն զի շատ մը դժուարութիւնք կան՝ որոնց յաղթել կարելի չէ եղած դեռ ևս. ի վերայ այս ամենայնի չենք կրնար ըսել որ այն մտածութիւնը բանաստեղծական երևակայութեան մը ծնունդ միայն ըլլայ, վասն զի ուսումնական սկզբանց հետ պինդ շղկապեալ է: Երկայն կ'ըլլայ զանոնք հոս յիշել. այս միայն ըսենք որ ամեն օդապարիկ գունտ օդուն մէջ բարձրանալով՝ ի կախ կը մնայ՝ ցորչափ որ անոր տեղափոխած օդուն զանգուածը իր յատուկ ծանրութեանը հաւասար է. այն ատեն հանդարտաբար, ինչպէս ձուկ մը ջրին մէջ, ասանկ ալ ինքը օդուն մէջ կը լողայ: Բայց ինչպէս որ մեռած ձուկ մը հոսանքը կ'առնէ կը տանի, և հոսանքէն ոչ աւելի շուտ և ոչ աւելի դանդաղ կ'երթայ, ասանկ ալ կ'ընէ օդապարիկ գունտը: Ոչ առազաստ և ոչ ղեկ կը ծառայեն ասոր՝ օդուն մէջ, ինչպէս մեռած ձկան ալ ջրին մէջ ծառայել չեն կրնար: Անկարելի բան մըն է օդապարիկ գունտ մը կառավարել ցորչափ որ հոգն է միայն շարժիչ ուժը. սակայն դիւրին է անոր առաջնորդել սովորական ղեկի մը նման գործիքով, երբ անանկ ուժ մը ըլլայ զինքը շարժողը՝ որ օդէն անկախ ըլլայ, ինչպէս օրինակի համար շողին:




Արդ թեթեւ մը նկարագրենք Քաուֆմանի մեքենայն՝ զոր մեծ պատկերքնիս



ՔԱՈՒՖՄԱՆԻ ԹՈՉՈՂ, ՄԵՔԵՆԱՆ

Թուղ Վիճակի մէջ կը ներկայացնէ,  
իսկ պղտիկները՝ մէյ մը անոր արտա-  
քին գծագիրը և մէյմըն ալ անոր կէս  
հատուածը կ'երևցունեն:

Գծագիրը նախ կաթսայն և վառարա-  
նը կը ներկայացնէ, որ հասարակ շո-  
գեչարժի մը նման են ամենեկին: Երես-  
նոցին խողովակին տակը հորիզոնական



գլանը կը գտնուի, որմէն ձողերու հա-  
լաքում մը առջևէն տեսնուած գլանին՝  
շարժումը կը հաղորդեն, և որուն երկու  
ծայրերուն վրայ մեծ անիւները հաս-

տատուած են : Ասոնցմէ շարժումը,  
ինչպէս հատուածին պատկերքէն կը  
տեսնուի, թեաւոր ձողերուն կ'անցնի,  
ստամբաւոր անիւներու և պզտի ձողե-

րու միջոցաւ : Այս թեւերուն թիւը շատ է, այլ երկու առջևինները որ զլխաւոր պատկերքին մէջ կը տեսնուին, այս երկաթեայ թուչնոյն շարժմանցը զլխաւոր ծառայողներն են . կ'ելլեն ու կ'իջնեն, կը բացուին ու կ'ամփոփուին, ինչպէս բուն փետրաւոր թեւ ըլլային : Այս գըլխաւոր թեւերուն ետեւը ուրիշ չորս ալ կայ, երկերկու իւրաքանչիւր կողմը : Եւ բոլոր այս թեւերը՝ չորս կտոր զուգահեռական բարակ կերպասէ շինուած ու երկրթէ պաստառածիգներու վրայ պարզած են : Ասոնք վերէն վար կը շարժին, որով մեքենային տեղափոխութեանը կը ծառայեն, և միանգամայն շատ արագաբար վար իջնալու ու վեր ելլելուն վտանգներէ կը պաշտպանեն :

Բիւրեղեան Պալատին մէջ ներկայացուցած մեքենային գաղափարը հետեւեալ մեծութիւնը ունէր . թեւերուն ամբողջ երկայնութիւնը 1/4 ոտք է . լայնութիւնը 8-12 բլթաչափ : Միջնածողին կամ մխոցին բարձրացումը երեք ու կէս բլթաչափէ, իսկ անոր տրամագիծը գրեթէ երկու բլթաչափ : Շուգեվար մեքենայն երկու ձիու ուժ ունի, 115 լիտր միայն կը կշռէ, և 120 լիտր ճնշման ենթակայ է առ իւրաքանչիւր քառակուսի բլթաչափ : Թեւերը առ վայրկեան 150-200 շարժմունք կու տան, առ ժամ 12 անգղիական մղոն արագութիւն տպաւորելով : Սակայն Պարոն Քաուֆման կը հաստատէ որ իր շինելու մեքենային նուազագոյն արագութիւնը առ ժամ ութ հարիւր մղոնէ պակաս պիտոր չըլլայ :

Մեքենային կմախքին ստորին մասին վրայ չորս անիւ կայ, որոնցմով կրնայ որոշեալ ժամանակ դետնի վրայ վազել, երբ դիպուածով իրեն թեւոց մեծութեանը պատճառաւ պէտք եղած օդոյ քանակը չգտնէ, և արագաբար վազելով թռիչքը կ'առնու : Իսկ երբ օդային ասպարիզին մէջ կը նետուի, այս միջնորտի շոգեշարժ կառքը անանկ շինուած է, որ եթէ, օրինակի համար, լոնտրալէն Նիւ-Եօրք ճանապարհորդելով (որ վեց ժամուան մէջ ըլլուելու ճամբոր-

դութիւն է), Ատլանտեան ովկիանոսին մէջ ինալու վտանգը հանդիպի, կրնայ թեթեւ աղւոր շոգենաւ մը փոխուիլ, ծովուն վրայ ճամբան շարունակելու յարմար : Եւ երբ ածուխը պակսելու ըլլայ, շոգենաւը շուտ մը առազաստաւոր նաւ կրնայ փոխուիլ, կայմերով ու թիակներով :

### ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՈՒԹԵՐՈՐԴ

Ստամբու

(Տես երես 326)

Պատառը՝ մէյ մը որկորին մէջ (կը յիշես անշուշտ որ ստամբու տանող խողովակին անունն է) մտնելէն ետքը, ալ ինքզինքը ուրիշի ձեռքը թողլու է : Այս խողովակիս բոլոր երկայնութիւնը՝ պրզտի առաձգական օղակներու շարք մըն է, ոչք պատառին ետեւէն կը սղմուին՝ որ զան առաջ քշեն, և առջևէն կ'ընդլայնին՝ որ անոր ազատ անցք տան : Այս կերպով մերձաւորէ մերձաւոր մէկ մէկու կ'անցունեն, մինչև որ ստամբուին մուտքը տանին հասցնեն, ուր ետքի օղակը զան անոր մէջը նետելով վրան կը գոցուի :

Երբեք դիտած ես որդան մը, տզրուկի մը քալուածքը : Մարմնոյն բոլոր երեսը կ'ուռի հետզհետէ, դէպ 'ի յառաջ ուղղուելով, ինչպէս թէ ներսի դիէն բան մը գլորէր, պոչէն դէպ 'ի գլուխը : Բոլորովին ասոր նման շարժմունք մըն է որ կը տեսնայիր որկորին երեսը, եթէ կարենայիր դիտել զայն գործողութեան ժամանակը, ուստի և այս շարժմանս՝ սողնակերպ շարժմունք կոչեր են, ինչու որ քայլող որդան մը շարժմանը կը նմանի :

Հոս ուշադրութիւնդ շատ հարկա-